ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի Ինստիտուտի տնօրեն

Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի

Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր. գ. թ., ավագ դասախոս Մանուկյան Ա. Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ ՌԴ քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունները

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Քաղաքացիական իրավունքը այնպիսի իրավական նորմերի ամբողջություն է, որոնք կոչված են կարգավորելու քաղաքացիական իրավունքի սուբյեկտների միջև առաջացող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններ։
Իրենց առօրյա կյանքում քաղաքացիները և իրավաբանական անձինք միմյանց հետ մտնում են տարբեր գույքային իրավահարաբերությունների մեջ (Օրինակ՝ առուվաճառքի, բնակարանի վարձակալության, բժշկի խորհրդատվության, շինարարական կապալի, տաքսի ծառայությունից օգտվելու, ազգականի ծննդյան օրվա կապակցությամբ պայուսակ կամ հեռախոս նվիրելու և այլն)։ Նմանօրինակ այլ գործողությունները դրանց մասնակիցների միջև առաջացնում են գույքային հարաբերություններ։ Այդ հարաբերությունները կրում եմ գույքային բնույթ և կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով։

Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներ են նաև պետությունը և համայնքները՝ ի դեմս իրավասու պետական և համայնքային մարմինների, որոնք շատ հաճախ մտնում են քաղաքացիական կամ գույքային հարաբերությունների մեջ՝ պետության կամ համայնքի կարիքների համար գույք ձեռքբերելու, աշխատանքեր պատվիրելու կամ ծառայություններ ստանալու նպատակով։ Հարկ է նշել, որ քաղաքացիական իրավահարաբերութունների մեջ մտնելիս վերջիններս քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ համահավասար են և չեն օգտվում որևէ պետական իշխանական լիազորություններից։ Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցները ձեռք են բերում քաղաքացիական իրավունքներ և ստանձնում են քաղաքացիական պարտականություններ։

Քաղաքացիական իրավունքով կարգավորվող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններն ընդգրկում են հասարակական հարաբերությունների մեծ շրջանակ։ Սակայն հարկ է նկատել, որ քաղաքացիական իրավունքը կարգավորում է մասնակիցների իրավահավասարության և ինքնուրույնության վրա հիմնված այն գույքային հարաբերությունները, որոնք կրում են ապրանքադրամային բնույթ։ Դրանով իսկ քաղաքացիական իրավահարաբերությունները տարբերվում են այլ գույքային իրավահարաբերություններից (օրինակ՝ հարկերի վճարման, վարչական տուգանքի վճարման), որոնք թեև գույքային հարաբերություններ են, սակայն հիմնված չեն վերոնշյալ սկզբունքների վրա։

Դասընթացը նվիրված է ուսանողների կողմից ՌԴ քաղաքացիական օրենսգրքի հիման վրա քաղաքացիականն իրավահարաբերությունների կարգավորման վերաբերյալ համակարգային գիտելիքների ձեռքբերմանը՝ հատուկ շեշտադրելով ՌԴ քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունները։ Դասընթացը պարունակում է հիմնական տեղեկատվություն ՌԴ քաղաքացիական իրավունքի և դրա առանձնահատկությունների, գույքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև

ՌԴ քաղաքացիական օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության վերաբերյալ:

«ՌԴ քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունները» առարկան փոխկապակցված է «Հողային իրավունք», «Ընտանեկան իրավունք», «Աշխատանքային իրավունք» և այլ առարկաների հետ: «ՌԴ քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունները» առարկան յուրացնելու համար անհրաժեշտ է ունենալ գիտելիքներ պետության և իրավունքի տեսության, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացը նպատակն է ուսանողների կողմից ՌԴ քաղաքացիական իրավունքի և դրա առանձնահատկությունների վերաբերյալ համակարգային գիտելիքների ձեռքբերումը:

Դասընթացի խնդիրներն են ձևավորել ամբողջական պատկերացում ՌԴ քաղաքացիական իրավունքի, ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների և օբյեկտների, սեփականության և այլ սահմանափակ գույքային իրավունքների, պարտավորական իրավունքների, քաղաքացիական իրավունքների պաշտպանության և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը ՌԴ քաղաքացիական (գույքային) իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերն են: Դասընթացի առարկան ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների և օբյեկտների, սեփականության և այլ սահմանափակ գույքային իրավունքների, պարտավորական իրավունքների, քաղաքացիական իրավունքների պաշտպանության և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ հիմնահարցերն են:

Դասընթացի մուտքային պահանջները

Սկսելով դասընթացը, ուսանողները պետք է ունենան գիտելիքներ և հմտություններ իրավունքի և պետության տեսության, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, միջազգային մասնավոր իրավունքների ոլորտում:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

- ՌԴ քաղաքացիական իրավունքի, դրա սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք:
- ՌԴ քաղաքացիական հարաբերությունների կարգավորմանն ուղղված արդիական, տեսական խորացված գիտելիքներ, ինչպես նաև ոլորտում առկա նորագույն տեսությունների, հայեցակարգերի իմացություն՝ ՀՀ քաղաքացիական իրավունքի հետ համադրման համատեքստում:
- Իրավունքի ընկալման հիմնական հայեցակարգերի, իրավաստեղծման, իրավաբանական տեխնիկայի և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

- Կարող է ինքնուրույն իրավական գնահատական տալ ՌԴ քաղաքացիական իրավահարաբերությունների էությանը:
- Կարող է գործնականում կիրառել ՌԴ քաղաքացիաիրավական ոլորտի նորմատիվ իրավական ակտեր:
- Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել ՌԴ քաղաքացիաիրավական նորմերը և պայմանագրերը:

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

- Կարող է ընկալել ՌԴ քաղաքացիական իրավունքի կարգավորման նշանակությունը:
- Կարող է պատկերացում ունենալ ՌԴ քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների բնույթի և առանձնահատկությունների վերաբերյալ:
- Կարող է ձևավորել նորարարական մտածողություն և նորարարական գործունեություն ծավալելու կարողունակություն քաղաքացիաիրավական ոլորտում՝ ՌԴ քաղաքացիական իրավունքի կիրառման տեսանկյունից:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- *ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝*

- Ունակ է ինքնուրույն կիրառել ՌԴ քաղաքացիաիրավական աղբյուրները:

- Ունակ է իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստական հանգամանքներին քաղաքացիաիրավական ոլորտում ՌԴ-ում:
- Ունակ է ՌԴ քաղաքացիաան իրավունքի ոլորտում տալ որակյալ իրավական խորհրդատվություն և եզրակացություններ:
- Ունակ է ուսումնառության ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:

Դասավանդման եղանակները և մեթոդները

– դասախոսություն՝ լուսապատկերների ուղեկցությամբ,

– գործնական աշխատանքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 20 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 5-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**20**
1.1.1. Դասախոսություններ	**8**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**12**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**115**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**100**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**115**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**55**

1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	**60**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. ՌԴ քաղաքացիական իրավունքի ընդհանուր նկարագիրը՝ սկզբունքները, ինստիտուտները, ենթաինստիտուտները, քաղաքացիական իրավահարաբերությունների տարրերը	**5**	**1**	**1**
Թեմա 2. ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները. Ֆիզիկական անձինք՝ որպես ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ	**5**	**1**	**1**
Թեմա 3. ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները. Իրավաբանական անձինք՝ որպես ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ:	**5**	**1**	**1**
Թեմա 4. Պետությունը և համայնքները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ. Պետության և համայնքների՝ քաղաքացիական իրավահարաբերություններում	**5**	**1**	**2**

մասնակցության առանձնահատկությունները			
Թեմա 5. ՌԴ քաղաքացիական իրավունքի օբյեկտները, դրանց դասակարգումը: Քաղաքացիական իրավունքների առաջացման, փոփոխման և դադարման հիմքերը ՌԴ օրենսդրությամբ. Գործարքներ	**6**	**1**	**2**
Թեմա 6. Ժամկետները և հայցային վաղեմությունը ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ: Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը և տեսակները. Քաղաքացիահիրավական պատասխանատվություն	**6**	**1**	**2**
Թեմա 7. Սեփականության իրավունքը և այլ սահմանափակ գույքային իրավունքները. Սեփականության իրավունքի պաշտպանության եղանակները ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ	**6**	**1**	**1**
Թեմա 8. Ժառանգական հարաբերությունների առանձնահատկությունները ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ: Պարտավորական իրավահարաբերությունները և դրանց	**6**	**1**	**2**

առանձնահատկությունները ՌԴ քաղաքացիական իրավունքում: Պայմանագրային պարտավորություններ և վնաս պատճառելուց բխող պարտավորություններ:			
Ընդամենը	**20**	**8**	**12**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. ՌԴ քաղաքացիական իրավունքի ընդհանուր նկարագիրը՝ սկզբունքները, ինստիտուտները, ենթաինստիտուտները, քաղաքացիական իրավահարաբերությունների տարրերը

1.1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը

1.2. ՌԴ Քաղաքացիական իրավունքի համակարգը

1.3. ՌԴ քաղաքացիական իրավունքի աղբյուրները

1.4. ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը և այլ քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող օրենքները

1.5. ՌԴ քաղաքացիական օրենսդրության սկզբունքները

Թեմա 2. ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները. Ֆիզիկական անձինք՝ որպես ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

2.1. Քաղաքացիական իրավահարաբերությունների հասկացությունը և դրա առանձնահատկությունները, կառուցվածքը

2.2. Քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների հասկացությունը և տեսակները

2.3. Ֆիզիկական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

2.4. Ֆիզիկական անձանց իրավունակությունը և գործունակությունը. Գործունակության սահմանափակման և գործունակությունից զրկելու հիմքերը կարգը ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ

2.5. Ֆիզիկական անձանց սնանկությունը

2.6. Քաղաքացիական կացության գրանցման ակտերը. Քաղաքացուն անհայտ բացակայող և մահացած ճանաչելը

Թեմա 3. ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները. Իրավաբանական անձինք՝ որպես ՌԴ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

3.1. Իրավաբանական անձանց հասկացությունը

3.2. Իրավաբանական անձը որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ

3.3. Իրավաբանական անձանց ստեղծումը և լուծարումը

3.4. Իրավաբանական անձանց դասակարգումը. Առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձինք

3.5. Առևտրային իրավաբանական անձանց տեսակները ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ

3.6. Ոչ առևտրային իրավաբանական անձանց տեսակները ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ

Թեմա 4. Պետությունը և համայնքները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ. Պետության և համայնքների՝ քաղաքացիական իրավահարաբերություններում մասնակցության առանձնահատկությունները

4.1. Պետության՝ քաղաքացիական իրավահարաբերություններում մասնակցության առանձնահատկությունները

4.2. Համայնքների՝ քաղաքացիական իրավահարաբերություններում մասնակցության առանձնահատկությունները

4.3. Պետության և համայնքների անունից՝ քաղաքացիական իրավահարբերություններում հանդես գալու իրավասությամբ օժտված մարմինները/անձինք

4.4. Պետության դատական իմունիտետը՝ արտաքին տնտեսական գործարքներում

Թեմա 5. ՌԴ քաղաքացիական իրավունքի օբյեկտները, դրանց դասակարգումը

5.1. Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները ՌԴ քաղաքացիական իրավունքում

5.2. Գույքի հասկացությունը և դասակարգումը

5.3. Աշխատանքները և ծառայությունները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներ

5.4. Ինտելեկտուալ գործունեության արդյունքները

5.5. Անձնական ոչ գույքային բարիքները՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ: Անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանությունը

Թեմա 6. Քաղաքացիական իրավունքների առաջացման, փոփոխման և դադարման հիմքերը ՌԴ օրենսդրությամբ. Գործարքներ

6.1. Իրավաբական փաստերի հասկացությունը

6.2. Գործարքների հասկացությունը և տեսակները

6.3. Գործարքների ձևը

6.4. Անվավեր գործարքներ. վիճահարույց և առոչինչ գործարքներ

6.5. Անվավեր գործարքների հետևանքները

Թեմա 7. Ժամկետները և հայցային վաղեմությունը ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ

7.1. Ժամկետների հասկացությունը՝ որպես իրավաբանական փաստերի տարատեսակ

7.2. Ժամկետների տեսակները

7.3. Հայցային վաղեմության հասկացությունը և տեսակները

7.4. Հայցային վաղեմության կասեցումը և վերականգնումը

Թեմա 8. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը և տեսակները. Քաղաքացիաիրավական պատասխանատվություն

8.1. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը

8.2. Քաղաքացիական պատասխանատվության տեսակները և առանձնահատկությունները

8.3. Քաղաքացիական պատասխանատվության հիմքերը և պայմանները, պատասխանատվությունից ազատումը

8.4. Քաղաքացիական պատասխանատվության նշանակությունը

8.5. Քաղաքացիական պատասխանատվության ձևերը և դրանց չափերը

Թեմա 9. Սեփականության իրավունքը և այլ սահմանափակ գույքային իրավունքները. Սեփականության իրավունքի պաշտպանության եղանակները ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ

9.1. Գույքային իրավունքի հասկացությունը ՌԴ քաղաքացիական իրավունքում

9.2. Սեփականության իրավունքը՝ որպես հիմնական գույքային իրավունք. Հասկացությունը և բովանդակությունը

9.3. Սեփականության իրավունքի ծագման և դադարման հիմքերը

9.4. Սեփականության իրավունքի տեսակները. Միանձնյա և ընդհանուր սեփականություն (բաժնային և համատեղ)

9.5. Սահմանափակ գույքային իրավուքների հասկացությունը և տեսակները ՌԴ քաղաքացիական իրավունքում

Թեմա 10. Ժառանգական հարաբերությունների առանձնահատկությունները ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ

10.1. Ժառանգության հասկացությունը և նշանակությունը

10.2. Ժառանգության եղանակները՝ ըստ օրենքի և ըստ կտակի

10.3. Ժառանգության իրավահարաբերությունների օբյեկտները

10.4. Ժառանգության ընդունումը

10.5. Գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները

Թեմա 11. Պարտավորական իրավահարաբերությունները և դրանց առանձնահատկությունները ՌԴ քաղաքացիական իրավունքում: Պայմանագրային պարտավորություններ և վնաս պատճառելուց բխող պարտավորություններ

11.1. Պարտավորության հասկացությունը և կառուցվածքը

11.2. Պարտավորությունների կատարումը և դադարումը

11.3. Պարտավորությունների կատարման ապահովումը և եղանակները

11.4. Պայմանագրերի հասկացությունը և նշանակությունը

11.5. Պայմանագրերի առանձին տեսակները ՌԴ քաղաքացիական օրենսգրքով

Թեմա 12. Մտավոր սեփականություն. Հեղինական իրավունք, հարակից իրավունքներ և պատենտային իրավունք. Դրանց կարգավորման առանձնահատկությունները ՌԴ քաղաքացիական իրավունքում

12.1. Մտավոր գործունեության հասկացությունը և նշանակությունը. Մտավոր գործունեության արդյունքները. Մտավոր սեփականություն

12.2. Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ. Դրանց սուբյեկտները և իրավունքների ձևակերպումը

12.3. Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը

12.4. Պատենտային իրավունք. Օբյեկտները և սուբյեկտները

12.5. Գյուտարարություն, օգտակար մոդել և արդյունաբերական նմուշ

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Гражданское право: учебник: в 2 т. / С.С. Алексеев, О.Г. Алексеева, К.П. Беляев и др.; под ред. Б.М. Гонгало. 3-е изд., перераб. и доп. М.: Статут, 2018. Т. 1.

2. Гражданское право: учебник: в 2 т. / О.Г. Алексеева, Е.Р. Аминов, М.В. Бандо и др.; под ред. Б.М. Гонгало. 3-е изд., перераб. и доп. М.: Статут, 2018. Т. 2.

3. Гражданское право: Учебник. В 2 т. / Под ред. Б.М. Гонгало. Т. 2. - 2-е изд., перераб. и доп. - М.: Статут, 2017.

4. Иванчак А.И. Гражданское право Российской Федерации: Общая часть. М.: Статут, 2014.

5. Иванчак А.И. Гражданское право Российской Федерации: Особенная часть. М.: Статут, 2014.

6. Гражданское право. Учебное пособие, 3-издание. Я.А. Юкша. Москва, ИНФРА-М-2014

7. Российское гражданское право: Учебник: В 2-х томах. Том I. Общая часть. Вещное право. Наследственное право. Интеллектуальные права. Личные неимущественные права / Отв. ред.Е.А.Суханов.—М.:Статут,2011.

8. Законотворческая история современного Гражданского кодекса /сост.: П. В. Крашенинников, Е. В. Бадулина, И. В. Овчарова, Н. А. Абрамушкина ; Исслед. центр частн. права им. С. С. Алексеева при Президенте РФ .–Москва : Статут, 2019.

9. Зайцев О.В. Современные проблемы доктрины гражданского права. – М.: Статут, 2017.